ԿԱՐԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԵՎՏՐԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՎԻԹ ԿԵՐՍՄԵՆՋՅԱՆ

Կարինի առևտրահասարակական կենտրոնն ունեցել է կուռ, ընդարձակ, շղթայաձև՝ հաջորդական հրապարակներից կազմված հորինվածք։ Այն, անցնելով նրա հնագույն մասերից մինչև նորագույնը, հանդիսանում էր քաղաքի ֆունկցիոնալ մասերը շաղկապող կարևոր քաղաքաշինական տարրերից մեկը։

Ս՝ասնագետները և ճանապարհորդները հաճախ Կարինը, ըստ նրա անցած պատմական ժամանակաշրջանների, բաժանել են հնագույն, հին և նոր մասերի (գծ. 1)։ Համապատասխանաբար զարգացման նման փուլեր են զանազանվում նաև քաղաքի կենտրոնի կառուցվածքում, որի ճարտարապետական և քաղաքաշինական վերլուծման համար հարկ է ուսումնասիրել ամեն մի շրջան առանձին վերցրած։ Մեզ հասած տեղեկությունների համաձայն հնագույն Կարինը դա նույն Թեոդոսուպոլիսն է[1]։

Թեոդոսուպոլիսը *(արաբական աղբյուրներում՝ Կալիկալա) տարածվում էր քաղաքի պաշտպանական կենտրոնի՝ ամրոցի շուրջը։ Ղ. Ալիշանը նշված վայրի մասին հաղորդում է. «Ի մնացուածս հին շինուածոցս քաղաքին՝ որ հարկ է թէ չէին սակաւք, այժմ նշանաւորք բերդն ստուարապարիսպ՝ Գարագալէ կոչեցեալ, յոր անուն և քաղաքն Քալիգալէ՝ կոչէր յարաբացւոց և միջնաբերդն իշքալէ, յորում ապարանք կուսակալին և զինարան ճէպխանէ...։ Պարիսպ մյուս ածեալ բերդաւն, և մէջ երկոցուն զպարսպացն հիսարպիչէն կոչեցեալ՝ դատարկ է, երկոքին ունի աշտարակս կամ բրգունս՝ 62 ընդամէն, և չորք-չորք դրունք պարսպացն, և խրամ խոր զբերդաւն. երևին նշմարք և այլոյ խրամի հեռագույն զքաղաքաւն ածեալ, որոյ է շրջապատ իբր երեք ժամուք»*[2]։ *Այսինքն, հին քաղաքն ունեցել է երկմաս քաղաքաշինական կառուցվածք և չորս դարպաս։*

Հին քաղաքի շուրջը իրարից 50—60 մետր հեռավորության վրա փորված են եղել քարահյուս որմերով փոսեր [խանդակներ] և տեղ-տեղ ձգվել են քարաշեն կամուրջներ։ Բերդաքաղաքը արտաքին պարիսպների վրա ունեցել է. արևմուտքից՝ Երզնկայի, արևելքից՝ Թավրիզյան, հարավից՝ Նոր և հյուսիսից՝ Գյուրջիի դարպասները[3]։ *Ուշագրավ է, որ Ալիշանի հիշատակած չորս դարպասները տեղադրված են եղել երկրի չորս կողմերին համապատասխան։ Այս փաստը, ինչպես և քաղաքի երկմաս ֆունկցիոնալ կառուցվածքը, հիմք են տալիս պնդելու, որ նրա հատակագծային հորինվածքը անտիկ է։*

Կարինի դիրքը պաշտպանական տեսակետից առավելություններ ունենալու հետ նպաստավոր էր նաև առևտրական կապերի համար։ Հին ժամանակներից ի վեր նրա վրայով էր անցնում Արևելքն Արևմուտքի հետ կապող առևտրական կարևորագույն մայրուղիներից մեկը[4]։ *Այդ պատճառով էլ քաղաքի բնակչության կազմում գերակշռում էին առևտրականներն ու արհեստավորները։ VII դ. վերագրվող տաջիկ անանուն աշխարհագիրը հիշատա-*

---

1 Հ. Քոսյան, Բարձր Հայք, Վիեննա, 1925, էջ 7։

2 Ղ. Ալիշան, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1885, էջ 36։

3 Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 9—10։

4 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 228։

կում է. «Կալիկալան մի քաղաք է, որ իր ներսում ունի բավական անառիկ ամրոց..., այստեղ առևտրականների թիվը շատ մեծ է»[5]։ Պատմությունից հայտնի է, որ 752 թ. բյուզանդական կայսր Կոստանդին Ե-ն (Կոպրոնիմոս) գրավել է Կարինը և մեծ թվով հայ առևտրականներ ու արհեստավորներ է տեղափոխել արևմտյան գավառներ, նաև՝ Կ. Պոլիս[6]։ Արաբ մատենագիրները



Գծ. 1. Կարինի տեղահանույթային հատակագիծը. 1. միջնաբերդ, 2. հնագույն Կարին, 3. հին Կարին, 4. նոր Կարին։

բազմիցս նշում են Կալիկալայի զարգացած գորգագործության մասին, նույնիսկ ասելով, թե «Կալիկալայում մի տեսակ գորգ են պատրաստում, որ իր անվան կրճատումով կոչվում է կալի [խալի]»[7]։

Այս և այլ բազմաթիվ տեղեկություններ հաստատում են առևտրական կյանքի գոյությունը քաղաքում, հետևաբար և՝ առևտրահասարակական կենտրոնի առկայությունը։

---

[5] Hudud Al-'Alam, The regions of the world, Oxford, 1937, p. 142—143.

[6] «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց», ս. Պետերբուրգ, 1887, էջ 132։

[7] Յակուտ էլ Համուի, Աշխարհագրական բառարան, Լայպցիգ, գիրք 4, 1924, էջ 19 (արաբերեն)։

Կարինի առևտրահասարակական շենքերը միշտ էլ գրավել են ճանապարհորդների ուշադրությունը։ Հին Կարինին վերաբերող այդ տեղեկություններից նշենք Հ. Քոսյանի հետևյալ հաղորդումը. «Բերդիս շուրջը կտեսնվեն այժմ մեծ ու փոքր վաճառատեղիներ, տեղ-տեղ ալ միահարկ ու կրկնահարկ, մանավանդ արևմտյան կողմը»[8]։ Ղազար Չարըքը հիշատակում է, որ Կարինի շուկաները հնագույն ժամանակներից սկսած եղել են աշքի ընկնող և եռուն։ Հնագույն Կարինը իր շատ փոքր տարածքով իսկ ունեցել է բազարների նմանվող ընդարձակ շուկաներ, որոնք իրենց գոյությունը պահպանել էին մինչև 1914 թվականը[9]։ Մովսես Խորենացին, ճշտելով Թեոդոսուպոլսի առևտրահասարակական կենտրոնի տեղը քաղաքի ֆունկցիոնալ կառուցվածքում, վկայում է. «Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրի մթերանոց բազմապատիկս շինեաց և Աւգոստին անուանեաց ի պատիւ Աւգոստոսի»[10]։

Թեոդոսուպոլիսը, գտնվելով Բյուզանդիայի և Պարսկաստանի սահմանագծին, հաճախ է ենթարկվել հարձակումների։ Նրա վաղ միջնադարյան առևտրահասարակական կենտրոնի մասին տեղեկությունները սուղ են։ Սակայն պարզվում է, որ քաղաքը, հիմնադրված լինելով կայսրի հրամանով, և ոչ թե աստիճանաբար առաջացած (ինչպես վաղ միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքները՝ Դվինն ու Նփրկերտը), իր հատակագծային հորինվածքով ուներ անտիկ քաղաքաշինական սկզբունքներ։ Այդ են վկայում նրա երկմաս քաղաքաշինական կառուցվածքը, դարպասների թիվն ու տեղակայումը երկրի կողմերի նկատմամբ և առևտրահասարակական կենտրոնի տեղաբաշխումը՝ ամրոցից որոշ հեռավորությամբ, քաղաքամիջում, որ բնորոշ էր ագորաներին[11]։

VII դ. Կալիկալան գրված արաբական զորքերը միայն X դարում են, նահանջելով բյուզանդացի զորավար Ջմշկիկի բանակների առաջ, հեռանում քաղաքից[12]։ Դրանից հետո քաղաքը երկար ժամանակ չի վերաշինվել. ըստ XI դ. բյուզանդական պատմիչ Միքայել Ատտալիատեսի, Թեոդոսուպոլիսը ավերված էր ու լքված[13]։ 1018 թ. Վասիլ Բ կայսրի հրամանով այն վերակառուցվում է տեղի բնակիչների ջանքերով[14] և վերանվանվում «Կարնոյ քաղաք», իսկ ավելի ուշ՝ Արզրում և այժմ՝ Էրզրում[15]։

«Կարնոյ քաղաքի» դերը միջազգային կարավանային առևտրում ավելի ցայտուն է դառնում Արծնի կործանումից հետո (1048 թ.)։ Թեև այն ենթարկվել էր սելջուկների (1071 թ.) և մոնղոլների (1252 թ.) ասպատակումներին, սակայն միջազգային տարանցիկ առևտրում, իր աշխարհագրական կարևոր դիրքի շնորհիվ, հաջորդ դարերում ևս շարունակում է մնալ որպես կարևոր վաճառաշահ քաղաք։ Նրա ծաղկման շրջանը կարելի է համարել IX—XIII դդ.՝ մինչև մոնղոլական արշավանքները։ Կարին-Թեոդոսուպոլիսը դարեր շարունակ եղել է Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքը և վարչական կարևոր կենտրոնը[16]։

Անդրադառնալով Կարինի քաղաքաշինական ֆունկցիոնալ կառուցվածքին, նշենք, որ այն նույնպես բաղկացած էր միջնաբերդից, բերդաքաղաքից և արվարձաններից։ Լինը, լինելով քաղաքում, հաղորդում է, որ այն ոչ հե-

---

8 Հ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 8։

9 Ղազար Չարըք, Կարինապատում, Պեյրութ, 1957, էջ 106։

10 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 339։

11 «Всеобщая история архитектуры», М., 1973, т. 2, с. 301.

12 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 179։

13 Michaelis Attaliatae, Historia. Bonnae, 1853, p. 148.

14 «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 88։

15 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 58։

16 Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 227—228։

ռու անցյալում ունեցել է եռամաս հատակագծային կառուցվածք[17], որը հստակ երևում է ռուսական զորքերի կողմից Կարինը գրավելուց հետո կատարված տեղահանության հատակագծում (գծ. 1)։

Բերդաքաղաքի չորս դարպասներից Թավրիզյան դարպասի մոտ կային (ըստ Տեյրոլի կատարած նկարի) զանազան առևտրական և արհեստավորական շարքեր՝ Ջիֆտե Մինարեին և նախկին դիվանատանը կամ հունական մատենադարանի շենքին կից։ Մի այլ տեղեկության համաձայն այստեղ էր գտնվում «Գյումիշլի գումբեզը» (Արծաթյա գմբեթ) հրապարակը։ Արևմտյան կողմից Երզնկայի դարպասի մոտ էին գտնվում փողերանոցն ու Ջիրիտի (Ջիարշավի) հրապարակը։ Վերջինս գտնվում էր քաղաքի երկու գլխավոր փողոցներից մեկի՝ Թավրիզյան դարպասից երկարող փողոցի վերջնամասում։ Հարավից Նոր կամ Խարբերդի դարպասն էր, որտեղ եղել էր Բաղարբաշի հրապարակը։ Հյուսիսային կողմից՝ Գյուրջիի (Վրացական) կամ Տրապիզոնի դարպասի առաջ բացվող հրապարակում կային բազմաթիվ խանութներ և կարավանատներ։ Մաքսատան շրջապատում ապրում էին տարբեր ազգության պատկանող վաճառականներ, և այս մաքսատունը Զմյուռնիայից ու Կ. Պոլսից հետո համարվում էր ամենաբանուկը[18]։

Տրապիզոնի դարպասը գտնվում էր Երզնկայի դարպասի մոտից ճյուղավորվող 2-րդ մեծ փողոցի վերջում։ Նշված երկու գլխավոր փողոցները, տարածվելով քաղաքի երեք դարպասների միջև, Երզնկայի դարպասի առջևում հատվելով, կազմում էին հրապարակաձև մի տարածք։ Այսինքն, բերդաքաղաքի դարպասներից դեպի Կարինի արվարձանները անցումը կատարվել է զանազան հրապարակներով։ Դրանցից ձգվող գլխավոր փողոցները իրար էին կապում քաղաքի չորս դարպասները։ Սակայն փողոցները իրենց հատակագծային նկարվածքով նման չեն անտիկ քաղաքաշինությանը բնորոշ Դոկումանոսին և Կարդոին։ Սա ենթադրել է տալիս, որ միջնադարյան ժամանակներում քաղաքը վերակառուցելիս աղավաղվել է նրա անտիկ հատակագծային նկարվածքը։

Թավրիզյան դարպասի հրապարակում եղած կառույցների մասին հանդիպում ենք հետևյալ նկարագրությանը. «Թավրիզի դռան մեջ կա մի հայտնի եկեղեցի, որի գմբեթը ունի 50 արշին բարձրություն։ Այս գմբեթի մի քանի կամարները փլվել են... և անհնարին է եղել վերականգնել դրանք։ Այդ պատճառով մուսուլմանները մի մզկիթ են կառուցել դրա դիմաց»[19]։ Նույն վայրի մասին մի այլ աշխատության մեջ նշվում է, թե շուկաների կողքին էին գլխավոր մզկիթը (Ուլու Ջամին) և մի քանի բնակելի տներ[20]։

Վերոհիշյալներից կարելի է եզրակացնել, որ չնայած բերդաքաղաքի կառուցապատումը փոփոխվել է միջնադարյան ժամանակներում, սակայն նրա առևտրահասարակական համալիրը պահպանում էր Թեոդոսուպոլսի առևտրահասարակական կենտրոնի քաղաքաշինական տեղը և զարգանում էր միջնաբերդի շուրջը, տարածվելով (ըստ անտիկ քաղաքաշինությունից անցած կառուցապատման ավանդույթի) գլխավոր պաշտամունքային շենքի՝ Ուլու Ջամիի կամ նախկին մատենադարանի և Ջիֆտե Մինարեի շրջապատում։ Սրանց տեղերում վաղ միջնադարում եղել են քրիստոնեական պաշտամունքային կառույցներ, որովհետև, ինչպես նշում է Ջոն Հոկը, «այս վայրերում իսլամական ճարտարապետության նմուշներ երևան են գալիս միմիայն ուշ՝ XI դ., դրանցից շատ քիչ հուշարձաններ են պահպանվել, դա էլ XII դ. վերջերին վերագրվող»[21]։

---

[17] Lynch H. F. B., Armenia, v. 2, London, 1901, p. 210.

[18] «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 4, Երևան, 1967, էջ 61—63։

[19] Նույն տեղում, հ. 2, Երևան, 1964, էջ 42։

[20] „Researches of the Rev. E. Smith and. Rev. H. G. Dwight in Armenia", v. I, 1833, Boston, p. 131.

[21] J. Hoag, Islamic Architecture, New York, 1967, p. 222.

Կարինի առևտրահասարակական կենտրոնի հատակագծային հորինվածքը, ինչպես արևելյան քաղաքների նույնատիպ համալիրների մեծամասնությունում, կազմված էր առանձին մասնագիտացված շուկաներից և արհեստավորական թաղերից։ Վերջիններից ամեն մեկն ուներ իր բաժանմունքը. մի փողոցը հատկացված էր մետաղագործներին, մյուսը՝ պղնձագործներին, երրորդը՝



Գծ. 2. Առևտրահասարակական կենտրոնի սխեմատիկ հատակագիծը. 5. Թավրիզյան դուռ, 6. Երզնկայի դուռ, 7. Գյուրջիի դուռ, 8. Անոա դուռ (Բազարբաշի), 9. Իշմեյդան, 10. Բերդի հրապարակ, 11. Փալուտ մեյդան, 12. Աթմեյդան։
Գծ. 3. Բեդեստենի հարկերի հատակագիծը։

կաշեգործներին, չորրորդը՝ դերձակներին, ապա արծաթագործներին, մասվաճառներին, պտղավաճառներին և այլն[22]։ Այդ է վկայում նաև Միրախորյանի հետևյալ նկարագրությունը. «Տեղիս սովորական արհեստներն են պղնձագործությունը, դարբնությունը, պայտառությունը, զինագործությունը, ոսկերչությունը, դերձակությունը, կոշկակարությունը, թամբագործությունը,

[22] Norman G. Bell, Armenia and the compaign of 1877, London, p. 32.

հյուսնությունը, ոստայնանկությունը, օճառաշինությունը, խաղախորդությունը, ներկարարությունը, սև սաթի շինությունը, մոմաշինությունը...»[23]։

Կարինի առևտրահասարակական կենտրոնի մասին հավաստի տեղեկություններ է հաղորդում Ղ. Չարբքը։ Ըստ նրա, քաղաքում հաջորդական կարգով եղել են հետևյալ շուկաները. միջնաբերդի անմիջական շրջապատը, Թավրիզի և Անոա դռները, Իշմեյդանը, Նոր դուռը, Երզնկայի դուռը, Փալուտ մեյդանը, Աթմեյդանը, Գյուրջիի դուռը, որոնք իրականում մեծ հրապարակներ էին, որտեղ շրջանաձև կամ քառանկյունի պարագծով դասավորվել էին հարյուրավոր կրպակներ, խանութներ և արհեստանոցներ։ Հիշատակված հրապարակները, իրարից նկատելի հեռավորության վրա գտնվելով, միմյանց լին միանում երկարաձիգ ու շեն շուկաներով (գծ. 2), որոնք «Գոտիի մը նման կշրջապատեին հնագույն և հին Կարինները, զանոնք բաժանելով հայկական թաղերեն՝ նորագոյ Կարինեն, շինված քաղաքի եզերքներուն վրա»[24]։ Շրջանաձև երկարող այդ շուկաներն ունեին հետևյալ հաջորդականությունը. Անոային դարպասից սկսած, Իշմեյդան կենտրոնով և շարունակվող խանութաշարքերով, դրանցից վերև դեպի միջնաբերդը՝ ոսկերիչների ծածկված շուկան էր, ապա դաֆֆինոցը, որը ամբողջապես կոշիկի արտադրությանն էր հատկացված։ Այստեղից դեպի Գյուրջիի դարպասը երկարում էին՝ «Կամուրճի գլուխը», Եկեղեցու շուկան՝ ծամին դուռ կենտրոնով, Պարսիկների, «Միսալլէի», «Կիւլ Ահմէտի», Թաղին գլուխը («Մահալլէ բաշի»), պղնձագործների և դարբինների շուկաները։ Գյուրջիի դարպասից մինչև Աթմեյդան և Փալուտ մեյդան հրապարակները շարունակվում էր մոտ մեկուկես կիլոմետր երկարություն ունեցող «Սաման բազարին», իսկ դրանից դեպի Երզնկայի դուռը՝ քարաշեն «մաղազաների» շարքերը[25]։

Կարինի առևտրահասարակական համալիրի ճարտարապետական-ծավալատարածական հատկանիշները պարզաբանելու համար անդրադառնանք նրանում ընդգրկված առանձին կառույցների մասին մեզ հասած տեղեկություններին։

1) Առևտրական շենքեր։ Առանձին շուկաների մասին խոսելիս նշեցինք առևտրական շարքերի մասին։ Այստեղ ավելացնենք այն շուկաները, որոնք, հատկացված լինելով Կարինի հնագույն առևտրական ու արհեստավորական ասպարեզներին, պատկանում էին քաղաքի հայ բնակչությանը։ Այդպիսիք են եղել ոսկերչանոցը, բախչրջնոցը (պղնձագործական արհեստանոցներ), երկաթագործների, Կամրջի, Ծամին, Նազիկ, Երզնկայի դուռ շուկաները[26]։

Առևտրական շենքերից կարևորագույնը կարելի է համարել Ռուսդեմ փաշային վերագրվող բեդեստենը (գծ. 3)։ Թեև շենքը հայառճ չէ, սակայն իր հատակագծային լուծմամբ վերագրելի է նախաօսմանական ժամանակաշրջանին, քանի որ նման կառույցների (ուշ միջնադարյան ժամանակներից հասած տեղեկությունների համաձայն) հաճախ ենք հանդիպում Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում (Բաբերդ, Երզնկա, Շապին Գարահիսար, Սեբաստիա, Ակն, Բաղեշ, Վան և այլն)[27]։

Բեդեստենների մասին առաջին անգամ տվյալների ենք հանդիպում բյուզանդական տիրապետության քաղաքներ Տիրեյում (800 թ.) և Կեսարիայում (903 թ.)[28]։ Վերջին հանգամանքը, ինչպես և այն պատմական փաս-

---

23 Մ. Կ. Միրաքորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս արևելյան Տաճկաստանի, հ. 3, Կ. Պոլիս, 1885, էջ 154։

24 Ղազար Չարբք, նշվ. աշխ., էջ 106։

25 Նույն տեղում, էջ 107։

26 Նույն տեղում, էջ 106։

27 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 4, էջ 126, 136, 137, 153, 158, 200, 247։ Կան նաև հիշատակություններ ուրիշների մոտ։

28 Gunduz Ozdes, Turkiye carsilari, Istanbul, 1954. S. 55—56.

տը, որ արվեստի տարբեր բնագավառներում, հատկապես ճարտարապետության մեջ, եղել են բյուզանդա-հայկական սերտ առնչություններ, հիմք են տալիս պնդելու, որ այդպիսի կառույցներ հայկական քաղաքներում գոյություն են ունեցել շատ ավելի վաղ, քան ուշ միջնադարում։

2) Իշևանատներ։ Այսպիսի շենքերի գոյության մասին առաջին անգամ հանդիպում ենք Զաքարյա Կազվինիի հետևյալ հիշատակությունում. «Այստեղ, առևտրական ճանապարհների վրա, սելջուկ սուլթանների դուստրերը ամեն մի փարսախի վրա կառուցել են տվել իշևանատներ, որովհետև Ռումում (Կարինում—Դ. Կ.), ցուրտերը տևում են 8 ամիս, և ձյունը բավականին շատ է»[29]։

Կարինում կարավանատների քանակի մասին մեզ հասած տեղեկությունները տարբեր են. Տավերնիյեն նշում է, որ դրանք բազմաթիվ են[30], Էվլիյա Չելեբին դրանց թիվը հասցնում է 80-ի[31], Սմիտը և Դվայտը՝ 36-ի[32], իսկ Միրախորյանը՝ 150-ի[33] (հավանաբար ամբողջ շրջանում)։ Ըստ Դ. Զարբքի, Կարինում կային բազմաթիվ առևտրական խաներ, որոնք մի քանի տասնյակի հասնող վաճառատեղերով, մթերանոցներով ու մեծաքանակ ապրանքների վաճառքի պահեստներով ինքնըստինքյան շուկաներ էին՝ յուրաքանչյուրը հատկացված առևտրի որոշ տեսակի համար։ Հիշատակելի է նաև հեղինակի հետևյալ վկայությունը. «Խանը ինքն իր մեջ ամբողջություն մըն էր առևտրական հասկացողությամբ, իր սրճարանով, աղբյուրով, պաշտոնեությամբ և իրեն հատուկ բեռնակիրներու բազմությամբ, որոնք հոն կաշխատեին և կծառայեին վաճառականներուն»։ Հաջորդ տողերում նա քաղաքի առևտրահասարակական կենտրոնի խաներից հիշատակում է Խալօղլու, Կամպուտի, Դեվրիշ աղայի, Թյությունի, Կենջ աղայի, Բաց, Բրնձի, Ժամին, Բաստրմաջոնց, Պարսիկների և այլ իշևանատներ, նշելով, որ դրանք երկհարկ, քառամուտք և բակավոր շենքեր էին[34]։

3) Այլ օժանդակ շենքեր։ ա) Բաղնիքներ։ Քաղաքում իշևանող վաճառականների կենցաղային հոգսերի համար առևտրահասարակական կենտրոնում կային բազմաթիվ բաղնիքներ։ Միրախորյանը դրանցից միայն երկուսն է հիշատակում՝ Մարմար և Կյոմրիկ համամները[35]։ Մի ուրիշ աշխատության մեջ, XIX դ. տվյալներով, նշվում է 19 բաղնիքների առկայություն[36]։ Էրզրումի պատմաճարտարապետական հարցերին նվիրված թուրքերեն մի աշխատությունում հիշատակվում են Մուրադ փաշայի, Ներկարարաց թաղի, Քառասուն աղբյուրների, Բաստրմաջոնց, Պղնձագործների թաղի, Տախտակյա, Կյոմրիկ, Փոքր, Տիկնանց, Ծերունիների և այլ բաղնիքներ[37], որոնց մեծամասնությունը վերագրելի է զարգացած միջնադարյան ժամանակաշրջանին։ բ) Խոհակերաններ։ Միջնադարյան քաղաքների կենտրոններում իշևանատան և այլ օժանդակ հարմարությունների հետ լինում էին սննդի սպասարկման առանձին խանութներ։ Հայկական քաղաքների առևտրահասարակական համալիրներում այդպիսի դեր էին կատարում խոհակերանոցները։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում խոհակերանոցների վերաբերյալ տեղեկությունները սուղ են։ Դրանց գոյության մասին տեղեկանում ենք միմիայն Վարդան Այգեկցու

---

29 Զաքարյա Կազվինի, Գիրք մարդկանց և երկրների մասին, Հոտինգեն, 1848, տե՛ս «Ռում» (արաբերեն հրատարակություն)։

30 Tavernier J. B., Les six Voyages en Turque..., Paris, 1679, VI, p. 11—12

31 Evliye Celebi, Seyahatnamesi, Istanbul, 1933, Cilt 2, s. 212.

32 „Researches of the Rev...", p. 128.

33 Մ. Կ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 153։

34 Ղազար Զարբք, նշվ. աշխ., էջ 287։

35 Մ. Կ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 154։

36 „Researches of the Rev...", p. 128.

37 Konyali, Ibrahim Hekki, Erzurum Terihi, Istanbul. 1959, s. 280.

մի քանի առակներից[38]։ Ամեն դեպքում, հիմնվելով մեզ հասած տեղեկությունների վրա, կարելի է պնդել, որ նման շենքերի առկայությունը ուշ միջնադարյան հայկական քաղաքների կենտրոններում նորություն չէր, այլ ուներ շատ ավելի հին անցյալ։

Կարինի կենտրոնն այցելողներին սպասարկող սննդի ձեռնարկությունների մասին ունենք միայն Էվլիյա Չելեբիի հետևյալ վկայությունը. «Շուկայում պատրաստված ընտիր, սպիտակ, յուղալի չյորեքը, մեկ գրկաչափ ընտիր հացը, գաթան, խաշը, թոնրի խորովածը, հարիսան, խմելիքներից տեսակ-տեսակ շերբեթները, հասարակ մարդկանց բոզան՝ հայտնի են»[39]։ Սա համեմատելով վերոհիշյալ տեղեկությունների հետ, կարելի է ասել, որ նման խանութներ Կարինում եղել են զարգացած միջնադարյան ժամանակներից սկսած և հանդիսացել են քաղաքի առևտրահասարակական կենտրոնի բաղկացուցիչ կառույցներից մեկը։

գ) Հիշատակարան-դամբարաններ։ Առանձին անհատների հիշատակին նվիրված փոքր շինություններ են՝ կառուցված որպես դամբարան-աղոթատեղի կամ ցայտաղբյուր։ Այդպիսիք են՝ Երզնկայի դռան մոտ եղած «Նահատակաց տապանը», մի ուրիշ տապան՝ Աթմեյդան շուկայում, սուրբ Թորոսի հուշադամբարանը՝ Իշմեյդան շուկայում[40], Դրախտի ակը՝ Ներկարարաց թաղամասում, Մոմագործների, Բատ բազարի, Ձկան շուկայի, Գյուրջիի դռան և այլ տեղերում եղած աղբյուրները։ Այսպիսի ճարտարապետական փոքր կառույցների թիվը բավական շատ է Կարինի կենտրոնում[41]։

Վերևում ներկայացված շենքերի քանակն ու զբաղեցրած ընդարձակ տարածքը հաստատում են, որ հանձինս Կարինի, միջնադարյան Հայաստանում եղել է միջազգային նշանակության ևս մի առևտրահասարակական կենտրոն։ Այստեղ գտնվող կենցաղային, առևտրական, արտադրական ու իշևանային շենքերի բազմաթիվ տեսակները ֆունկցիոնալ սերտ կապերով կազմակերպում էին քաղաքի առևտրական կյանքը։ Այդպիսիք են եղել՝ Ներկարարաց արհեստավորական թաղը իր բաղնիքի ու Դրախտի ակի հետ մեկտեղ, Բաստրմաջոնց իշևանատունը իր բաղնիքի, խանութների և աղբյուրի ընկերակցությամբ, Պղնձագործների թաղը իր բաղնիքի հետ, Դեվրիշ աղայի իշևանատունը և այլն։ Նշված շինությունները, իրար հետ ստեղծելով առևտրի որոշ տեսակի մեջ մասնագիտացված առևտրահասարակական խմբավորումներ, աստիճանաբար առաջացրել են հաջորդական, անկանոն ձևի 7 հրապարակներ (գծ. 2) և դրանք իրար միացնող առևտրական փողոցներ։ Այսպես, թաղային և հրապարակաձև հորինվածքային դասավորության առևտրահասարակական բջիջները, քաղաքի ընդարձակմանը համընթաց, հաջորդաբար ստեղծել են շուկաների մի խումբ, որոնք ապրանքամատակարարման և մատչելիության նկատառումներով զարգացել են դեպի քաղաքադարպասները։

Անդրադառնալով առևտրահասարակական բջիջների ծավալատարածական-ճարտարապետական հատկանիշներին, անհրաժեշտ է նշել, որ համալիրների հորինվածքային ներդաշնակության մեջ իշխող դերը պատկանում էր պաշտամունքային շենքերին՝ իրենց բնորոշ հերոսական մասշտաբով, սլացիկությամբ և կատարելագործված մշակվածությամբ։ Երկրորդական կերպարը ստեղծում էին մնացած շենքերը, իրենց հորիզոնական, փռված ծավալներով։

Կարինի առևտրահասարակական կենտրոնի շուկաների փնջային սկզբունքն ու հատակագծային բջջային հորինվածքը, ելնելով քաղաքի տեղանքի ձևից, կազմավորել են միջնադարյան Հայաստանի քաղաքների առևտրահասարակական կենտրոնների գլխավոր երկու հատակագծահորին-

---

38 Ն. Մառ, Ժողովածոյք Առակաց Վարդանայ, հ. Բ, Պետերբուրգ, 1894, էջ 191 և 245։

39 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 4, էջ 62։

40 Ղազար Չարբ., նշվ. աշխ., էջ 74—75։

41 Մանրամասն տե՛ս Konyali, Ibrahim Hekki, նշվ. աշխ., էջ 401—402 և 144—153։

գծաքային տարբերակներից (գծային և համատարած) գծային հրապարակների համակարգը, որը միացնելով քաղաքի տարբեր ֆունկցիոնալ մասերը ստեղծում էր փոխադարձ կապ՝ շառավղաշրջանաձև հատակագծով ընդարձակվող քաղաքի և նրա առևտրահասարակական համալիրի սահմանների միջև։

Միջազգային ցամաքային առևտրի դերի թուլացումը, և կապիտալիստական հարաբերությունների առաջացումը հաջորդ դարերում, նպաստում են հայկական քաղաքներում արհեստագործության ծավալմանը և նրա համքարությունների գործունեության մեծացմանը։ Զարգացման այսպիսի օրինաչափությունը (հակառակ քաղաքական ոչ նպաստավոր պայմաններին) բերում է մի քանի քաղաքների և դրանց կենտրոնների սահմանների ընդարձակմանը։ Այդ քաղաքների թվում էր նաև ուշ միջնադարյան Կարինը՝ Էրզրումը։

Էրզրումը ուշ միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների նման ուներ անկայուն իրավիճակ՝ հաճախ ավերվում և վերականգնվում էր։ Դրանք հաստատող տեղեկությունները բազմաթիվ են։ Գրիգոր Խլաթեցին հաղորդում է. «Զկարնոյ քաղաքն՝ ղԱրզրում քան զամենայն խիստ ավերեց»[42]։ 1514 թ. թուրք-պարսկական պատերազմում բախվող կողմերը ձգտում էին իրենց հսկողության տակ առնել մի կողմից Հնդկաստանից և Միջին Ասիայից դեպի Փոքրասիական նավահանգիստներ տանող միջազգային առևտրի մայրուղիներն ու Մերձավոր արևելքի կարևորագույն դիրք ունեցող քաղաքները՝ Թավրիզը, Երևանը, Էրզրումը և Թոխաթը, մյուս կողմից՝ Կասպից, Սև և Միջերկրական ծովերը իրար կապող առևտրի ու հաղորդակցության ճանապարհները և հանգրվանային քաղաքները[43]։ Շահ Թահմազի հիշատակարանում հանդիպում ենք նաև Էրզրումի ավերման պատկերների[44]։

Էրզրումի առևտրահասարակական կենտրոնի ընդարձակմանը վերաբերող տեղեկություններից այստեղ նշենք Ղ. Զարբքի հետևյալ նշումը. «Քաղաքի արտաքին պարիսպները ժամանակի ընթացքին և մասնավորապես 1895 թ. մեծ երկրաշարժին ավերման և քանդումների ենթարկված ըլլալով, այդ վայրի վրա շինված են շենքեր և շուկաներ»[45]։ Ս. Էփրիկյանը Թավրիզյան դարպասի շրջապատի մասին գրում է. «Արտաքին պարիսպին շուրջ գրեթե քարընկեց մը և ավելի հեռուն մարդաչափ ու կես խորությամբ փոս փորված է և երկու կողմերը որմերով ամրացուցած են ու քարեղեն կամուրջներ ձգած վրան, բերդը երթալու համար։ Փոսեն ասդին մինչև բերդը ամբողջ շուկա է և մեծ արվարձան»[46]։

Ք. Ջելեբին հաղորդում է, թե Էրզրումն ունի հին և նոր թաղամասեր, գրանցում կան ջամի, բաղնիքներ և բեդեստեն։ Սա վկայում է, որ քաղաքը հաջորդ դարերում շարունակվել է կառուցապատվել բնակելի և առևտրահասարակական շենքերով[47]։ Կեր-Պոտերը XIX դ. սկզբում այցելելով քաղաք, գրում է. «Ժամը 11.30-ին անցնելով հոծ շուկաների միջից, պարսպի կրկնակի դարպասներից մտնելով, հանգրվանեցինք քաղաքում»[48]։ Նման տեղեկություններ կան նաև՝ Գյուրջիի, Երզնկայի դռան և Իշմեյդանին կից բազարբաշիի շրջապատում գտնվող՝ քաղաքի ուշ շրջաններում կառուցված շուկաների մասին։ Հետևապես, կարելի է եզրակացնել, որ նոր Կարինին համապատասխանում էր քաղաքի արվարձանային մասը։ Այստեղ ուշ միջնադարում առաջա-

---

42 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, հ. Ա, Երևան, 1955, էջ 282։

43 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 82։

44 «Մատենադարանի պարսկական հրովարտակները», հ. 2, Երևան, 1959, էջ 8—9։

45 Ղ ա զ ա ր Զ ա ր ք ք, նշվ. աշխ., էջ 59։

46 Ս. Է փ ր ի կ յ ա ն, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 43։

47 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 4, 1967, էջ 43։

48 Հ ո վ հ ա ն ն ե ս Հ ա կ օ ր յ ա ն, Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934, էջ 834։

ցած առևտրահասարակական ձեռնարկությունները կազմում էին բերդաքաղաքի կենտրոնի անմիջական շարունակությունը և նրա զարգացման ուշ միջնադարյան փուլի բաղկացուցիչ մասը։

Ամփոփելով նշենք, որ Կարինի առևտրահասարակական համալիրը զարգացել է Թեոդոսուպոլսի կենտրոնի տեղում՝ հանդիսանալով նրա շարունակությունը։

Ֆեոդալական հարաբերությունների կազմավորմանը զուգընթաց, աստիճանաբար զարգանում է քաղաքի առևտրահասարակական կենտրոնը։ Այստեղ առաջացած թաղային և հրապարակաձև հորինվածք ունեցող խմբավորումները (կազմված՝ իջևանատներից, առևտրական ու արհեստավորական շարքերից, հասարակական ու կենցաղային սպասարկման այլ շենքերից) ստեղծել են հաջորդական հրապարակներից բաղկացած, գծային հորինվածք ունեցող շուկաների և արհեստավորական թաղերի մի փունջ։ Կարինի առևտրահասարակական կենտրոնը, վաղ միջնադարյան ժամանակաշրջանում առաջանալով միջնաբերդի շրջապատում, հաջորդ դարերում (ապրանքամատակարարման և մատչելիության նկատառումներով) գլխավոր փողոցների երկարությամբ զարգացել է դեպի պարսպի դարպասները, դարձել քաղաքի ֆունկցիոնալ մասերը կապող քաղաքաշինական կարևոր տարրերից մեկը։

Ուշ միջնադարում, հակառակ հայկական քաղաքներում կատարվող գյուղացման և ամայացման պրոցեսին, Կարինը պահպանում է իր նշանակությունը, դառնալով Մերձավոր արևելքի արհեստագործության կարևորագույն կենտրոններից մեկը։ Այս շրջանում կառուցված առևտրահասարակական շենքերը հանդիսանում էին միջին դարերում կառուցապատված գլխավոր կենտրոնի անմիջական շարունակությունը և այն մատչելի էին դարձնում քաղաքի նորակառույց մասերին։

АРХИТЕКТУРНО-ГРАДОСТРОИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ТОРГОВО-ОБЩЕСТВЕННОГО ЦЕНТРА ГОРОДА КАРИНА

ДАВИД КЕРТМЕНДЖЯН

Резюме

Особенности средневекового торгово-общественного центра Карина формировались на различных этапах истории города. Центр раннесредневекового Карина (Феодосиополя) дислоцировался по античному градостроительному принципу, который сохранился также в композиции центра, образовавшегося в последующие века. С дальнейшим развитием феодальных отношений расширяется торгово-общественный центр Карина. Здесь образуются группы различных, обслуживающих торговлю, зданий (караван-сарай, постоялые дворы, торговые и ремесленные ряды, другие общественные и коммунально-бытовые здания). Ими формируется целый градостроительный комплекс, состоящий из последовательно расположенных площадей, которые связаны между собой линейной системой торговых и ремесленных улиц. Позднесредневековый Карин (Эрзерум) продолжает сохранять свое торгово-ремесленное значение, тогда как некоторые города Западной Армении теряют его. Новые торгово-общественные здания Эрзерума градостроительно дополняли отмеченный центр и являлись его непосредственным продолжением.